ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1945 Общественные науки

Մ. Ներսիսյան

ՎԱՐԴԱՆ ՕՁՆԵՑՈՒ ՁԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԱՂՈՐԴՈՒՄ)

Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագրերի բաժնում № 4331-ի տակ պահվում է բավական ստվարածավալ մի ձեռագիր աշխատություն, որը պարունակում է արժեքավոր նյութեր ու կարևոր տեղեկություններ Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի 18 և 19-րդ դարերի պատմության լուսաբանման համար։ Ըստ ամենայնի հետաքրքրական այդ աշխատությունը, որ բաղկացած է 527 էջից և կազմված է 14 տետրակից, ունի «Պատմութիւն նոր քաղաքական և եկեղեցական Հայաստան աշխարհի, Մեծի և Փոքու» վերնագիրը։ Ձեռագրի հեղինակն է Սանահնի վանքի միաբան Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին (ծնված 1812 թ.)։ Իր այդ աշխատությունն Օձնեցին սկսել է գրել 1847 թվականին և ավարտել է 1868 թվականին։ Աշխատությունը գրված է գրաբար և բաղկացած է 27 գլխից։ Իր «Պատմութեան» առաջին և երկրորդ գլուխներում Օձնեցին համառոտակի խոսում է 14—17-րդ դարերի հայկական իրականության հետ կապված մի քանի պատմական դեպքերի մասին, որոնք չեն հիշատակվել մեր պատմիչների (Թովմա Մեծոփեցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Սարկավագի) և ապա պատմաբան Միքայել Չամչյանի գործերում։ Հաջորդ գլուխներում հեղինակը մանրամասնորեն կանգ է առնում Հայաստանում և հարևան երկրներում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին (մինչև 1852 թ.) կատարված պատմական անցքերի վրա։

Օձնեցու «Պատմութիւն»-ը բաղկացած է հետևյալ գլուխներից.

1. Տեղեկութիւնք համառօտ անցից Հայաստան աշխարհի եւ ազգի՝ որ լիովին չգտանին ի պատմագիրս Հայոց։

2. Յաղագս անցից Աղուանից աշխարհին եւ կաթողիկոսաց եւ ժառանգական աթոռակալութեանն Հասան-Ջալալեանց ի Գանձասար։

3. Յաղագս կաթողիկոսութեան տէր Եսայիայի Հասան-Ջալալեանց։

4. Յաղագս Թագաւորելոյ Նադր շահի։

5. Յաղագս սկզբնաւորութեան տիրող խանից Ղարաբաղու։

6. Վասն պատերազմին Հաջի Չալապի խանին Շիրուանու ընդ Հերակլ արքային Վրաց։

7. Յաղագս զորանալոյ Ղաճար Մհամադ խանին, որ ասի Աղայ Մահմադխան. եւ գործոց Սիմէօն կաթողիկոսի։

8. Յաղագս դաշնադրութեան հայոց և ռուսաց վասն կանգնելոյ զթագաւորութիւն հայոց. եւ վասն մահուան Սիմէօն կաթողիկոսի եւս եւ դաշանց վրաց ընդ ռուսաց։

9. Վասն տառապագրութեան բնակչաց մեծ եւ փոքր Հայաստան աշխարհաց. եւ անցից կաթողիկոսաց Աղուանից։

10. Յաղագս ժառանգելոյ ի Հայաստան Ներքինի Մահմեդխանին, աւերութեան եւ գերութեան Թիֆլիզ քաղաքի։

11. Վասն գնալոյ Աղայ Մահմեդխանի ի Պարսկաստան եւ դառնալոյ ի Շուշի եւ սպանման նորա անդ։

12. Յաղագս բարձման թագաւորութեան Վրաց եւ մահուան Ղուկաս կաթողիկոսի եւ ընտրութեան ի տեղի նորա Յովսէփ եպիսկոպոսի Արղութեանց. եւ Դանիէլ պատրիարգի Կ. Պոլսոյ։

13. Յաղագս ընտրութեան երկուց կաթողիկոսացն Դանիէլի եւ Դաւթի եւ հակառակ միմեանց օծման նոցա։

14. Ռուսք տիրեն Վրաստանի եւ մասին Հայաստանի. պատերազմաւ առնու կնեազ Ցիցիանով զԳանձակ. դիմէ ի վերայ Երեւանայ ըստ խնդրանաց Մահմեդխանի նորա եւ խաբի ի նմանէ։

15. Վիճաբանական անցք եւ թշնամական գործողութիւնք Դաւիթ եւ Դանիէլ կաթողիկոսաց եւ կուսակցաց նոցա։

16. Ապստամբութիւնք խանիցն Արցախայ, Շամքոռայ, Շիրվանայ, Բաքուայ եւ Դարբանդայ. սպանումն կնեազ Ցիցիանովի եւ Իբրահիմ խանի Արցախայ ապստամբութեան պատճառաւ. կուսակալութիւն զրաֆ Գուտովիչի. դարձ աքսորանացն Դանիէլ կաթողիկոսի եւ վախճան նորա։

17. Օծումն Եփրեմ կաթողիկոսի. կուսակալութիւն Տորմասովի մարկիզի Պաւլուչչիի եւ մանր կռիւներ ի Հայաստան։

18. Հաշտութիւն պարսից եւ ռուսաց ի Գիւլստան։

19. Յաղագս կամօք միաբանելոյ Հայոց ընդ կաթոլիկ համազգեաց իւրեանց պապականաց. եւ ոչ յաջողելոյ գործոյն։

20. Պատերազմ Պարսից ընդ օսմանցւոց. բազմանալ պարտուց էջմիածնի. եւ փախուստ Եփրեմ կաթողիկոսի ի Հաղբատ։

21. Բացումն պատերազմի պարսից ընդ ռուսաց. փախուստ տիրող խանիցն Շաքուայ, Շիրուանայ, Ղարաբաղայ ի Պարսկաստան։

22. Պասկեւիչ կարգի կուսակալ Վրաստանի եւ չուէ զօրօք ի վերայ Երեւանայ. Եփրեմ կաթողիկոս փոխադրի ի Հաղբատայ վանից ի Տփխիս եւ պարսիկք գերի վարեն զհայս ոմանց գիւղօրէից. Պասկեւիչ առնու ամրոցն Աբասաբատ եւ պարսիկք կոտորեն զզօրս ռուսաց ի դաշտի էջմիածնի։

23. Ռուսք յարձակմամբ առնուն զԵրեւան եւ զԹարդարապատ, զՆախիջեւան, զԽոյ եւ զՈւրմիա, տիրեն Միջին Հայոց եւ մասին Ատրպատականի. ապա եւ դաշն հաշտութեան հաստատեն ընդ Պարսից։

24. Պատերազմ ռուսաց ընդ օսմանցիս եւ յաղթութիւնք նոցա ի կողմանս Հայաստանի եւ Յունաստանի։

25. Գաղթականք լցուցանեն զկարօտութիւն իւրեանց բազմամբ արքունի տրոց. Յովհաննէս Կարբեցի օծանի կաթողիկոս։

26. Բանք վասն կաթողիկոսացն էջմիածնի եւ Կիլիկիոյ. մահ Ֆաթալի Շահին Պարսից եւ յաջորդաց նորա. Սահմանադրութիւն բարձրագոյն կարգադրութեան վասն եկեղեցւոյ լուսաւորչեան Հայոց Դաւանութեան. Գալուստ Ռուսաց կայսեր ի Հայաստան եւ Վրաստան, եւ կործանումն Ակոռւոյ։

27. Կաթողիկոսութիւն Ներսեսի Աշտարակեցւոյ հինգերորդին. մարախն եւ խոլերախտն սպառին ի Հայաստան զարտորայս եւ զմարդիկ։

Աշխատության վերջում, որպես հավելված, զետեղված են յոթ փաստաթղթեր ու ծանոթություններ, որոնց թվում է ցար Ալեքսանդր I-ի

1801 թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստը Վրաստանը Ռուսաստանին միացնելու մասին և սուլթան Մեջիդի 1839 թ. Գյուլխանեի հաթը Շերիֆը գրաբար թարգմանությամբ։ Հավելվածին հետևում է աշխատության առարկայական ցանկը՝ կազմված այբբենական կարգով։ Աշխատությունն ունի նաև երկու էջից բաղկացած առաջաբան։

Օձնեցու աշխատությունն անալիտիկ գործ չէ։ Այն շարադրված է նկարագրական մեթոդով, ընդ որում նկատելի է, որ հեղինակը ձգտել է դեպքերի շարադրման մեջ օբյեկտիվ լինել։ Օձնեցին առանձին ուշադրություն է դարձրել քաղաքական ու պատերազմական անցքերի վրա։ Օձնեցու Պատմությունն առանձնապես հարուստ և հետաքրքրական նյութ է տալիս Խամսայի ժելիքությունների և 19-րդ դարի առաջին քառորդում տեղի ունեցած ռուս-պարսկական պատերազմների վերաբերյալ։

Ինչպես վերևում նկատեցինք, Օձնեցին իր «Պատմութիւն»-ը գրել է 1847—1868 թ. թ. ընթացքում։ Իր աշխատության համար նա օգտագործել է զանազան վանքերում և այլ վայրերում գտնվող ձեռագրեր, կոնդակներ, հիշատակարաններ, տարեգրություններ, ինչպես նաև ականատես ու բանիմաց անձերից հավաքած տեղեկություններ։ Առաջաբանում այս մասին ասված է.

«Եւ սկիզբն կալայ հաւաքել զնիւթ պատմութեանս եւ զկարեւոր ծանօթութիւնս ի 1847 ամէ, ի սրատաշ ժամանակին իմոյ, ի հաւատարիմ բանագէտ անձանց, յականատեսից, ի նամակագրութեանց ոմանց, եւ ի յիշատակագրութեանց, ի տարեգրութեանց եւ ի կոնդակաց կաթողիկոսաց եւ պատրիարգաց, զորս գտի ի վանորայս եւ ի քաղաքս Հայաստանի. եւ առ ուսումնական եւ ազգասէր անձինս ի Ծորափորս, ի վանս Հազրատայ եւ Սանահնայ. ի Թիֆլիս քաղաք, ի Դանձակ, ի Շուշի քաղաք Արցախայ, ի սուրբ Էջմիածին, ի Շիրակ, ի Կարս, ի Կարին, ի Կ. Պ., ի Կիլիկիայ եւ ի Սեբաստիայ ի միջոցի քսան եւ մի ամաց»...

Օձնեցու գործը առանձին հետաքրքրություն է ներկայացնում նախ և առաջ այն պատճառով, որ նրա մի քանի գլուխները գրված են ականատեսների տված տեղեկությունների հիման վրա։ Աշխատության այն մասը, որ ընդգրկում է 1820—1850 թ. թ., հեղինակը գրել է որպես ականատես։ Սակայն Օձնեցու աշխատության արժեքը բարձր է մասնավորապես այն պատճառով, որ «Պատմութեան» շարադրման համար օգտագործած ձեռագրերի, կոնդակների ու տարեգրությունների մի մասը մեզ չի հասել։ Բավական է այստեղ բերել հետևյալ փաստը։ «Պատմութեան» մեջ արված մի քանի նկատողություններից երևում է, որ Օձնեցին օգտագործել է բանասեր Գալուստ Շերմազանյանի մոտ եղած հայկական ձեռագրերի հարուստ ժողովածուն։ Սակայն այդ ժողովածուն չի պահպանվել։ Թրիլիսիի համքարների 1865 թվականի ելույթի ժամանակ, ինչպես հայտնի է, համքարներն ավերում են Շերմազանյանի տունը և ոչնչացնում այնտեղ գտնվող բոլոր ձեռագրերը։ Իսկի այդ՝ մենք կարծում ենք, որ դժվար է ենթադրել, թե 1840—1860 թ. թ. զանազան վանքերում ու քաղաքներում եղած հայկական ձեռագրերը, որոնցից իր ժամանակին օգտվել է Օձնեցին, ամբողջությամբ հասել են մեզ։ Այս հանգամանքը, անկասկած, ավելի է բարձրացնում Օձնեցու աշխատության արժեքը։